ՏԱՐԱԳԻՐ ՀԱՅԻ ԿԵՐՊԱՐՆ Ա. ԱՅՎԱԶՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ*

Անուշ Լալայան

Անվանի գրականագետ Մ. Մ. Բախտինը Դոստոևսկու ժառանգությունը քննելիս եկել է այն հետևության, որ Դոստոևսկին գաղափարների իր կերպարները երբեք ոչնչից չի ստեղծել, «երբեք դրանք չի հորինել», ինչպես որ նկարիչը չի հորինում իր պատկերած մարդկանց. նա կարողանում էր նրանց լսել կամ կռահել առկա իրականության մեջ[1]: Նույնը կարելի է ասել նաև Այվազյանի մասին: Նրա յուրաքանչյուր կերպար իր նախատիպն ուներ՝ սկսած ինքնակենսագրական «Եռանկյունին» վիպակից: «Միջանցահովիկ», «Ուղեցույց Թիֆլիս քաղաքի, 1912 թվական», «Սատանայի օգնությունը» և շատ այլ ստեղծագործություններ անուղղակի կերպով գրողի կենսագրության մի բեկորը կարելի է համարել: Ու իրականում գեղարվեստական երկն ազդու և հետաքրքիր է, երբ իրականությանն ընդառաջ է: Սակայն ինչպես գրականագետներ Ռընե Ուելլեքն և Օսթին Ուորենն են ասում՝ «Ակներևորեն կեղծ է ողջ այն տեսակետը, որ արվեստը մաքուր և պարզ ինքնաարտահայտություն է, անձնական զգացմունքների ու փորձի վերարտադրում»[2]: Գեղարվեստորեն շարադրելու ճանապարհին գրողը, ինչպես բոլոր արվեստագետները, սեփական հույզերը և ընկալումներն են ամփոփում երկի մեջ՝ գրավիչ և հյութեղ դարձնելով այն:

Աղասի Այվազյանն այն սերնդի ներկայացուցիչներից է, ով ուղղակի կամ անուղղակի կերպով կրել է անցած դարի՝ Հայաստանի համար պատմական նշանակություն ունցող երեք խոշոր տառապալից իրադարձությունների կնիքը: Նրա ստեղծագործություններում արտացոլվում են հայ ժողովրդի կյանքի վերջին շրջանում տեղի ունեցած իրադարձությունների իմաստավորումն ու հաշվեկշիռը: Գրողի հայրը գաղթել էր էրզրումից՝ չարաբաստիկ ոճրագործության զոհը դառնալով, երբ բարոյական պատիժը և օտարության մեջ մի կտոր հաց վաստակելու խնդիրը երկար հետապնդում էր հուսալքված Այվազյան ընտանիքին: Ապա վրա հասան քառասնական թվականների տառապալից իրադարձությունները: Հայ մտավորականությունը կուլ էր գնում Բերիայի և Ստալինի բռնատիրական արարքներին, 1988-ից այս կողմ Սումգայիթի և Բաքվի ոճրագործությունները, Խորհրդային Միության փլուզումը, որին էլ հաջորդեց Արցախյան պատերազմը:

Մարդասիրության կատարյալ դրսևորում է Ա. Այվազյանի «Կիրակոսը» պատմվածքը: Այվազյանի հումանիզմը (մարդասիրություն) ենթադրում է մարդու էթնիկական տեսակի, նրա մշակութային արժեքների ճանաչման, պահպանման սկզբունքներ: Որևէ ազգի մշակույթի նկատմամբ ցանկացած ոտնձգություն ուղղված է համայն մարդկության հոգևոր արժեքների ոչնչացման դեմ: Մարդու բնության ու բարոյականության հարցերը դիտարկվում են մարդու հիմնահարցի տեսանկյունից: Կիրակոսի կերպարի տակ, ինչպես տեսնում ենք, Այվազյանը բնավ չի շեշտադրել հայեցողական ու կրավորական կյանքով ապրող և ճգնավորական բարոյականությամբ առաջնորդվող մարդու կերպարային իմաստն: Այստեղ առկա է համընդհանուր բարոյական սկզբունքների պահպանման գաղափարը, որը բնորոշ է հումանիստական փիլիսոփայությանը:

---

* Հոդվածն ընդունվել է 25.03 2015:
Հոդվածը տպագրության է երաշխավորել բ.գ.դ., պրոֆ. Վ.Եղիազարյանը:

Նախճիրից մազապուրծ հայ ընտանիքները նոր ապաստարան էին փնտրում աշխարհի տարբեր ծայրերում, ապա անցնում հոգեբանական և ֆիզիկական փորձությունների թիրախով: Խոհափիլիսոփայական «Կիրակոս» պատմվածքում արծարծված հարցերը մարդասիրական խնդիրների շուրջ են: Մարդկությունը ամբողջական մի մարմին է և այդ ամբողջի դեմ մեղանչելը կորուստ կամ ցավ է մարմնի յուրաքանչյուր անդամի համար: Մեծ ու փոքր մեղքերը բումերանգի անդրադարձումն ունեն և վաղ թե ուշ հարվածում են հակադարձ ազդեցության ուժով: Կիրակոս ասվածը, եթե մեկի համար խիղճն է, մյուսի համար՝ Աստված է, երրորդի համար՝ ենթագիտակցություն: Կյանքի կիրակոսյան փիլիսոփայությունը հետևյալն է՝ Կիրակոսը սկզբում մի հոգի էր, հետո երկու հոգի դառավ, ապա երեք, չորս և այսպես շարունակ: Մարդիկ շատանալով՝ տեղավորվեցին բոլորիս մեջ առանձին-առանձին: Եվ որքան շատանում են մարդիկ, այնքան առաջին մարդու վիճակը վատանում է, քանի որ վատությունն էլ միմյանց նկատմամբ շատանում է: Սովորական մահկանացուներին, սակայն, տրված չէ ընկալելու այդ մեծ գաղտնիքը: Եվ որքան շատ պետք է տանջվեն այն անխելքները, ովքեր 1915-ին վնասվածք են հասցրել Կիրակոսի մարմնին:

Ինչպես շատ պատմվածքներում, այնպես էլ այստեղ Այվազյան արձակագիրը երբեք չարությամբ չի լցված թշնամի ասածի նկատմամբ, եթե նույնիսկ նա արյունարբու, բարբարոս թուրքն է: Թշնամու կերպարը հեղինակը խիստ գույներով չի պատկերում: Ելնելով աստվածասիրության և մարդասիրության մեծ զգացմունքներից՝ հեղինակը խաղաղ ապրելու բանաձև է ուրվագծում: Կոչ ուղղում համայն մարդկությանն՝ անտարբեր չլինել ընդհանուր ցավի ու կորստի նկատմամբ: Կրոնական տեսակետից ներելու համար առաջին պայմանը խղճալն է. եթե սկսեցիր խղճալ դիմացինիդ, ապա նաև կսիրես նրան: Այդպես էլ վարվում են Այվազյանի հերոսները՝ «Սկզբում խղճացին Չինգիզ խանին, որ առանց հասկանալ ու իրեն է վնաս տվել, հետո խղճացին Աղա Խանին, որ էլի իրեն է վնաս տվել, և ինչ քան պետք է դեռ տառապի, խղճացի՜ն, խղճացի՜ն...»[3]: Կիրակոսի հոգու մի պատառիկն ունի նաև թուրքական ներկայիս կառավարությունը, որ չի կարողանում ձերբազատվել մեղքի ծանր կապանքներից: Ինքնախաբեությամբ տառապող ազգը խարխափում է հոգեմաշ ցավից, բայց սպեղանին գտնել չի կարողանում: Եվ որպես հիվանդագին պաշտպանական ռազմավարություն, շարունակվում է այս կամ այն ձևով ազդել էթնոսի ու նրա առանձին անհատների վարքագծի վրա:

Ա. Այվազյանն իրապես փնտրում է նոր մարդ, նոր բնավորություն, ազատության նոր մղումներ: Այս փնտրտուքների ճանապարհին նրա գրիչը հոռետեսության մարմնակաղապարը չի կրել երբեք, հակառակը, պարուրված էվդոմոնիստական հայացքներով, համոզել է, որ նախավերաբերմունքը, նախահայացքը ճակատագրական է ցանկացած գործի ու երևույթի առանցքում: Ահա թե ինչու Սեդրակը, Փեփոն, Կարապետը («Կռվարարներ») իրենց տրամաբանական համոզիչ, բայց միաժամանակ զվարճալի պատասխանն ունեն: Լակոնիկ, ողբերգակոմիկական այս փոքրիկ պատմվածքը պատկերելով՝ Այվազյանն առանձին հայերի՝ իրենց բնավորության յուրատիպ գծերով մեկտեղել է հավաքական կերպարի մի բնորոշ կողմ ևս՝ ներքին դժգոհությունը, անբավարարվածության, թերարժեքության զգացողությունը:

Պատմվածքի հերոսները թուրքի յաթաղանից փախել, եկել ծվարել են իրար գլխի: Նրանք մի ընտանիքի անդամներ են և ապրում են միասին, միևնույն հարկի տակ: Սակայն իսկապես կռվարարներ են, մարդիկ, որ առիթ չեն փախցնում իրար կծու խոսք ասելու, խայթելու, բայց իրականում իրար հետ կապված են քնքուշ ու հուզիչ սիրով, զարմանալի հոգատարությամբ: Նրանք լիարյուն խոր և հարուստ ներաշխարհ ունե-

ցող անհատներ են, որոնց խորթ են հոգեբանական բռնազբոս ապրումներն ու շինծու հոգեվիճակները: Անգամ առօրյա փոխհարաբերություններում՝ ամենասովորական թվացող արարքների մեջ էլ երևում են բնավորության ողջ բարդույթով.

Պողոս պապն ասում է.

-Ինչի՞ կաշեք վրաս…

Հորեղբայրներս իրար նայեցին:

-Հե՛չ,- ասաց հայրս:

-Ինչը հեչ… ուրեմն ես աշելու բան չե՞մ:

-Ինչի՞ … աշելու ես…,-կմկմաց Կարապետը:

-Աշելո՞ւ եմ…, աչքերը ոլորեց Պողոս պապս…, -աշելո՞ւ եմ…ի՞նչ է կապի՞կ եմ, որ աշելու եմ….: Եվ մեր առաջ կանգնում է Պողոս պապը՝ «տախտակի ձայն հանող նիհար ու չոր կրծքով»[4], որ եփվում է իր մեջ, ուզում է խոսել, առիթ է որոնում վեճի բռնվելու, կռվելու համար: Այսպես են նաև պապի որդիները, Փեփո հորաքույրը:

«Մե՛մ, հարցնող էղնի ինչի կկռվիք…»,-հարցնում են նրանք իրար: Եվ ահա թուրքի յաթաղանից մազապուրծ եղած այս մարդիկ, ազնիվ, ուրիշի ունեցածին ու հայրենիքին աչք չդրած, ռանչպար մարդիկ հանկարծ գտնում են պատասխանը՝ պարզ ու հասարակ, բայց և իմաստուն պատասխանը.

-Ատելություն է հավաքվել մեր ներսըդին…

-Հազար տարի մեզ մորթել են. դրա մեղքն է…

-Հըբը ո՞ւր տանինք, ո՞ւմ վրա խարջենք այդքան ատելությունը…[5]

Հանգամանքների հոգեբանական գունավորումներով ու մարդու մեջ մարդկայինն ընդգծելու առումով հետաքրքիր է կերպավորված «Կիրակոս» պատմվածքի Կիրակոս-խիղճ ենթագիտակցությունը, որի հեռազգացողությունն ընթերցողին պարուրում է զգայական ընկալման օբյեկտիվ շտրիխներով: Ֆելիքս Մելոյանը պատմվածքի շուրջ քննարկման մեջ զգայական ընկալումը դիտարկում է որպես բնազդային երևույթ: Բնազդ որակումն այստեղ տեղին է այն առումով, որ երևույթն ինքնին պահի թելադրանք է, ենթագիտակցորեն արտահայտված: «Բացահայտել հայ մարդու ազգային հոգեբանության բնորոշ կողմերը, նրա բնազդային դրսևորումները,-այսպիսինն է «Կռվարարների» հեղինակային միտումը, այդ ընթացքում է իրագործվում Այվազյան գրողի ինքնաբացահայտումը»[6]:

Կառուցվածքային առումով պատմվածքը բարդ է: 1982թ. Նոր տարուն հեղինակի ընտանիքն ուներ քսանյոթ անդամ: 1916 թվականի Ամանորին դարձան երեք հոգի, 1920 թվականին մնացել էր միայն մեկը և «մեկն էր ինքն իր Նոր տարուն շնորհավորել»: Հիշում էր նաև, որ Ամանորին մորը շնորհավորելու է եկել ինչ-որ տեղից հայտնված հայրը՝ գաղթականը շնորհավորել է գաղթականին: Հետո գալիս են հնոցապանը, բժիշկը, դառնում են չորս հոգի: Ոչ միայն հեղինակը, այլև՝ մայրը նիրվանային երկինքներում են թախծում, աստիճանաբար միասնանում են, շատանում: Չորս հոգի են, և այդ չորսն էլ աշխատում են միմյանց միջև եղած տարածությունը հեռացնել, որը մարդուն իր սկզբունքներից խորթացնող, փախստական դարձնող տարերք է. «Բոլոր մարդիկ տարածություն են պահպանում,-մտորում է հեղինակը,- Ամբողջ աշխարհն այդպիսի տարածություններով է իրար միացած, տոնձված: Մարդ, նույնիսկ տարածություն է ստեղծում իր և իր միջև»[7]: Իսկ, տարածությունները կրճատելով, մարդիկ միասնանալով երջանկանում են: Ու հեղինակը հանգում է այն համոզման, որ բոլորի մեջ Կիրակոսներ կան. «Մի հոգին երկուս է դառնում, երկուսը՝ չորս, չորսը՝ հարյուր… Բոլորից առաջ եղել է մի մարդ: Հետո այդ մարդը սկսել է բազմանալ… մարդիկ շատացել են…

իսկ ինքը տեղավորվել է բոլորի մեջ առանձին-առանձին… Դա Կիրակոսն է… Բոլորի մեջ կիրակոսներ կան, ինչքան մարդիկ շատանում են, այնքան առաջին մարդուն վիճակը վատանում է… Մարդիկ մոռանում են, իրար չեն հասկանում, իրար ուրիշ են համարում, նույնիսկ թշնամի, իրար բզկտում են… Կիրակոսը ներսից գոռում է՝ վատություն մի անի ուրիշին, դա ես եմ, այսինքն՝ դու ես… Հասարակ հաշիվ է…» [8]:

Փոքրիկ, ոչ սյուժետային այս պատմվածքներում, Աղասի Այվազյանը նկարչական խոսուն երանգներով պատկերել է մեր ազգային բնավորության յուրահատուկ կողմերը: Հավաքական կերպարի ստեղծման իր մեթոդը՝ ազգային բնավորության բնորոշ գծերը ցրել տարբեր հերոսների մեջ և այնուհետև, դրանք հիմնական գծերով միացնելով, ստեղծել հայի խտացված կերպար: Ամեն մի հայի հոգում մի խեղճ Կիրակոս է նստած, որը շշնջում է նրա ականջին՝ մի խառնվիր, վատություն մի արա, վատություն անողի համար ավելի վատ, նրան պետք է խղճալ՝ «բոլոր մարդիկ քո եղբայրներն են, հավատա բոլորին, հավատա»:

Իրարամերժ մարդկային որակներով, հակասություններով լի է Այվազյանի ստեղծած հայի կերպարը: Հայի հայրենիքը Հայաստանն է: Բայց յուրաքանչյուր հայ սրտի խորքում ցանկություն ունի ապրելու Եվրոպայում, Ամերիկայում, Ռուսաստանում: Զարմանալին այն է, որ այդ հայը ինքնադրսևորվում, կայանում է հենց հայրենիքից դուրս: Ի պատասխան այս երևույթի՝ Այվազյանն իր տեսակետն է հայտնում. «Եվ պատասխանը գրեթե միշտ նույնն էր՝ մարդու համար դժվար է ինքն իր հետ լինել: Թե ուզում ես ճանաչել դիմացինիդ, նախ պետք է ճանաչես ինքդ քեզ: Երկիրդ, պատմությունդ, մշակույթդ, այս ամենը տեսնելն ու հասկանալը ինքդ քո միջով՝ բարդ է և դժվար է» [9]: Որոնումների, փնտրտուքների մեջ է հայտնվում հայը և իր հաստատուն տեղը փորձում գտնել կյանքի հորձանուտում: Հախուռն բնավորությունները համատեղ չեն գոյատևում: Նաև իր տեսակի բացառիկությունը ընդգծելու համար նախընտրում է հաստատվել երկրից դուրս: Գեղարվեստական նյութն այստեղ շոշափելիորեն նույնացված է իրականությանը, և բարոյականություն կամ ազգային բնավորության հաստունություն ասվածը հարաբերական հասկացություն չէ, այլ ճշգրիտ արժեք:

Կիրակոսի կերպարն արդիական է հատկապես Եղեռնի 100-րդ տարելիցի ու 21-րդ դարում մարդկային հարաբերությունների համապատկերի վրա: Անհանգիստ է Կիրակոսի կերպարը, որի ենթատեքստում սոսկ ազգային ողբերգությունը չէ: Այստեղ առկա է խորը մարդասիրության ներքին մղումը, որ ավելի շատ համամարդկային արժեք է կրում իր մեջ:

Հիրավի, Կիրակոսի կերպարը Հայոց մեծ անհատական ընդվզման այվազյանական մոտեցման խտացումն է, դեպի գերմարդկայինի հաղթանակը: Սա է ստեղծագործության գաղափարական կողմն ու իդեալը: Ու այդ իդեալը բացառիկ է այնքանով, որ ընդվզումը մեծ ոճիրի դեմ՝ ի հակակշիռ թուրքական կառավարության արդեն համախտանիշ դարձած հայկական թաբուի, մեծ ոճիրի դեմ դրսևորված ժխտողականության, արտահայտված է խղճի մեխանիզմի ու խորը մարդասիրության արտացոլմամբ: Վերջինս ապաշխարման և հոգեփոխության խորհուրդ պարունակող երանգ ունի, ինչը պահանջված ու հնչեղ է հատկապես մեր օրերում:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Բախտին Մ. Մ., Դոստոևսկու պոեզիայի հիմնախնդիրները, Ստեփ., 2010, էջ 80:
2. Ուելլեք Ռընե, Ուորեն Օսթին, Գրականության տեսություն, Եր., 2008, էջ 105:

3. Այվազյան Ա., Եռանկյունին. վիպակներ և պատմվածքներ, Եր., 1983, էջ 363:
4. Նույն տեղուն:
5. Նույն տեղուն:
6. Գարուն, 1969, N1, էջ 90:
7. Այվազյան Ա., Փառահամար, Եր., 1973, էջ 4:
8. Նույն տեղում:
9. Այվազյան Ա., Փառահամար, էջ 4:

ԱՄՓՈՓԱԳԻՐ
Տարագիր հայի կերպարն Ա. Այվազյանի ստեղծագործություններում
Անուշ Լալայան

Սույն հոդվածում ներկայացված են Այվազյանի այն ստեղծագործությունների կերպարային համակարգն ու սյուժեի գաղափարական կողմը, որոնք առնչվում են տարագիր հայի ճակատագրին: Կիրակոսի կերպարով Այվազյանը ներկայացնում է տարագիր հայի ողբերգությունը, այն հայի ում մեջ կուտակվել է հայրենիքի կորստի ցավը, որի հիշողության խորխորատներում թանձր նստվածք է տվել բարբարոս ազգի դաժանությունները, եղեռնի սահմռկեցուցիչ տեսարանները:

Կիրակոսի կերպարի տպավորիչ գույներով Այվազյանն ընդգծում է ոչ միայն հայի՝ որպես էթնոկիր անհատի, այլ պարզապես մարդու գոյաբանության իմաստավորված արժեքը, կյանքի ճշմարիտ խորհուրդը:

Բանալի բառեր՝ *խիղճ, տարագիր հայ, գոյաբանական արժեք, ենթագիտակցություն, ազգային ողբերգություն, ճակատագիր, ներաշխարհ, ապրելու բանաձև:*

РЕЗЮМЕ
Образ эмигранта-армянина в произведениях А. Айвазяна
Ануш Лалаян

В данной статье представлены система образов и идейная сторона сюжетов тех произведений Айвазяна, которые соприкасаются с судьбой армянина-эмигранта. В образе Киракоса Айвазян показывает трагедию армянина-эмигранта, в котором накопилась боль потерянной родины, в памяти которого оставили глубокий след душераздирающие сцены и жестокость варварской нации.

Ярким образом Киракоса Айвазян подчеркивает армянина не только как этническую личность, но и его возрождение, осмысленные ценности справедливых жизненных советов.

Ключевые слова:*-совесть, армянин-эмигрант, ценность существование, подсознание, национальная трагедия, судьба, внутренний мир, формула жизни.*

SUMMARY

The character of an outcast Armenian in A. Ayvazian's works

Anush Lalayan

The article presents a character system and an idealogical part of those works of Ayvazian are presented which deal with the fate of an outcast Armenian. By the character of Kirakos, Ayvazian presents the tragedy of the outcast Armenian who suffers from the pain of the lost homeland. The barbaric atrocities of the nation, the terrible scenes of the genocide gave sediment in the rift of that Armenian's memory.

With impressive colors of Kirakos' character, Ayvazian underlines not only the Armenian as an ethnic individual, but simply the meaningful ontological value of the human person, the true sacrament of life.

Keywords: *an outcast Armenian, conscience, ontological value, subconsciousness, national tragedy, fate, inner world, formula of living.*